


ПРАВО

Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը իրավահասկացողության հիմնական տիպերի համայնապատկերում

Լեյլոյան Հասմիկ Ա.

«Վիվա Արմենիա» ՓԲԸ Տեղանքի տեղակայման պայմանագրերի կառավարման ավագ մասնագետ, պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ, Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)
 <https://orcid.org/0000-0001-7849-9591>
hasmik.leyloyan@ysu.am

ՀՏԳ՝ 340.1; EDN: HNSZUK;

DOI: 10.58587/18292437-2024.5-45

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Իրավական հնարավորություն, իրավական իրականություն, իրավաբանական տիպի իրավահասկացողություն, լեգիստական – նորմատիվային տիպի իրավահասկացողություն, օբյեկտիվ իրավունք, դրական (պոզիտիվ) իրավունք, իրավունքի կենսագործում, իրավունքի փիլիսոփայություն

Механизм превращения права из возможности в действительность в свете основных типов правопонимания

Лейлоян Асмик А.

Старший специалист по управлению контрактами по размещению сайтов в ЗАО «Вива Армения», аспирант кафедры теории и истории государства и права юридического факультета Ереванский государственный университет (Ереван, РА)

Аннотация. Раскрытие и понимание структуры превращения права из возможности в действительность во многом обусловлено правопониманием, следовательно, автор считает необходимым всесторонне проанализировать и интерпретировать данную структуру в контексте основных концепций (подходов) правопонимания. В частности, обсуждаемая структура рассматривается с позиций двух основных типов правопонимания: сначала с позиции легистского – нормативного типа, а затем юридического. В ходе анализа с позиций юридического правопонимания подробно рассматриваются этапы структуры превращения права из возможности в действительность, где критерием права является «объективное» право.

Так же, автор отдельно анализирует своеобразное отражение структуры превращения права из возможности в действительность в «Философии права» Гегеля, где, по сути, исходя из позиций интегрального подхода правопонимания, структура превращения права из возможности в действительность раскрывается методом восхождения философских категорий от абстрактного к конкретному.

Согласно представленному в статье заключению, структура превращения права из возможности в действительность имеет сложный, многосторонний, многоэтапный и изменчивый характер, раскрытие которого, безусловно, зависит от правопонимания. Регрессивными и устаревшими являются все те подходы, которые, опираясь на формальное, легистски-нормативное понимание права, рассматривают структуру превращения права из возможности в действительность лишь в узком смысле, как реализацию официально действующего позитивного права или закона в общественных правоотношениях путем государственного принуждения. Эти подходы уступают место концепциям, основанным на различия права и закона, которые на основе юридического (также смешанного) типа правопонимания анализируют структуру превращения права из возможности в действительность в широком смысле, с философских позиций, учитывая сущность права, объективные требования права, активная роль субъектов права и т.д.. С методологических позиций данного правопонимания рассматриваемая структура превращения права приобретает новое содержание, что, по мнению автора, является ключевым к решению проблемы превращения права из возможности в действительность.

Ключевые слова и словосочетания: Правовая возможность, правовая действительность, юридический тип правопонимания, легистский – нормативный тип правопонимания, объективное право, позитивное право, реализация права, философия права

The Mechanism of Transforming Law from Possibility into Reality within the Framework of the Main Types of Legal Understanding

Leyloyan Hasmik A.

Abstract. The elucidation and understanding of the mechanism of transforming law from possibility into reality are largely determined by legal understanding. Therefore, the author considers it necessary to comprehensively analyze and interpret this mechanism within the framework of the main concepts (approaches) of legal understanding. In particular, the discussed mechanism is examined from the standpoint of two main types of legal understanding: first, the legalistic-normative type, and then the jural type. During the analysis from the standpoint of jural understanding, the stages of the mechanism of the transformation of law from possibility into reality are presented in detail, where "objective" law serves as the criterion for law.

The author also analyzes the unique reflection of this mechanism in Hegel's "Philosophy of Law". Essentially, based on the positions of the integral approach to legal understanding, this mechanism is revealed through the method of ascending philosophical categories from the abstract to the concrete.

According to the conclusion presented in the article, the mechanism of the transformation of law from possibility into reality has a complex, multifaceted, multistage and changeable nature, the elucidation of which undoubtedly depends on legal understanding. Regressive and outdated are all those approaches that, based on formal, legalistic - normative understanding of law, view the discussed mechanism only in a narrow sense - as the implementation of officially acting positive law in public legal relations through state coercion. These approaches are being replaced by concepts based on the differences between law and legislation, which, on the basis of the jural (also mixed) type of legal understanding, analyze the discussed mechanism in a broader sense, from a philosophical standpoint, taking into account the essence of law, the objective requirements of law, the active role of legal subjects, etc. From the methodological perspective of this legal understanding, the examined mechanism acquires new content, which, according to the author, is essential for resolving the issue of transforming law from possibility into reality.

Keywords and phrases: Legal possibility, legal reality, jural type of legal understanding, legalistic - normative type of legal understanding, objective law, positive law, realization of law, philosophy of law

Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգի բացահայտումը և ըմբռնումը մեծապես պայմանավորված է իրավահասկացողությունից, հետևաբար անհրաժեշտ ենք համարում տվյալ կառուցակարգը համապարփակ վերլուծել և իմաստավորել իրավահասկացողության հիմնական հայեցակարգերի (մոտեցումների) համայնապատկերում:

Իրավահասկացողության բազմատեսակ մոտեցումները և հայեցակարգերը, ելնելով որոշակի չափանիշներից, իրավաբանական գրականության մեջ ընդունված է տարբերակել իրավահասկացողության երկու խոշոր տիպերի՝ լեգիստական – նորմատիվային և իրավաբանական [2, էջ 32]: Լեգիստական – նորմատիվային իրավահասկացողության դեպքում իրավունքը և օրենքը նույնացվում է՝ դրանք համարելով հոմանիշներ: Իրավունքը նույն ինքը պաշտոնապես տրված, գործող, դրական (պոզիտիվ) իրավունքն է, այլ կերպ ասած, կամայական և սուբյեկտիվ իշխանական կամահայտնություն: Այս մոտեցման հիմնական սկզբունքներից են իրավունքի, որպես իշխանական ստեղծագործության, իշխանական հարկադրականության մեկնաբանությունը: Այսպես, հաշվի առնելով, որ իրավունքի ձևավորման/ստեղծման մեկնաբանումը նույնպես կախված է իրավահասկացողությունից, Ն. Վ. Ուշանովան, ելնելով լեգիստական – նորմատիվային իրավահասկացողության ըմբռնումից, իրավունքի ստեղծման նախադրյալները դիտարկում է միայն որպես սոցիալական հնարավորություն, բայց ոչ իրավական [7, էջ 209]: Այստեղ

հնարավորությունը իրավական բնույթ է ստանում միայն այն դեպքում, երբ այն պետության կողմից ամրագրվում է իրավական նորմում և երաշխավորվում է պետական հարկադրանքով: Նման հնարավորությունները, Ն. Վ. Ուշանովայի կարծիքով, կարող են իրականացվել ոչ միայն կամավոր, այլ նաև պետական մարմինների, կառույցների, ինստիտուտների և արդարադատության միջոցով: Ստացվում է, որ հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգի տեսանկյունից սուբյեկտի վարքագծի առնչությամբ ցանկացած իրավունքի նորմ միայն հնարավորություն է, որի (կամավոր կամ հարկադրանքի միջոցով) կենսագործման դեպքում իրավունքի նորմը վերածվում է իրականության: Միաժամանակ, իրավական հնարավորությունների իրավական իրականության վերածելու գործընթացը տեղի է ունենում իրավակարգավորման առարկայի շրջանակներում և կապված է իրավական իրականության նոր ձևերի ձևավորման հետ՝ իրավահարաբերություններ, օրինականություն, իրավակարգ և այլն [7, էջ 209]:

Մեր կարծիքով, Ն. Վ. Ուշանովայի վերոգրյալ և համանման մոտեցումներն ընդունելի չեն, քանի որ իրավահասկացողության նմանօրինակ ըմբռնման դեպքում իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման հիմնախնդիրը հանգեցվում է միայն իրավունքի նորմի գործողության հիմնախնդրին, մինչդեռ իրավական իրականության և իրավական գործողության բովանդակային իմաստները անհրաժեշտ է հստակ տարբերակել, քանի որ ամեն

գործող կամ վավեր իրավունքը, դեռևս իրավական իրականություն չէ: Բացի այդ, մեր համոզմամբ դրական (պոզիտիվ) իրավունքը չի կարող հավակնել լինել իրավական իրականության արտահայտման միակ ձևը, քանի որ այն իրավունքի միայն նեղ ընկալում է և շատ դեպքերում օժտված չէ իրավական հնարավորության այնպիսի հատկանիշներով, ինչպիսին են անհրաժեշտությունը և օրինաչափությունը: Երկրորդը, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման գործընթացն ունի բարդ և բազմաստիճան բնույթ, հետևաբար օրենսդրության ձևավորումը և/կամ նորմատիվ իրավական ակտի սահմանումը՝ վերածման փուլերից միայն մեկն է և, արդյունքում, ի վիճակի չէ արտացոլելու ողջ գործընթացի առանձնահատկությունները: Եվ վերջապես, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը փոփոխական է և կրում է կոնկրետ պատմական բնույթ՝ այսինքն կախված է տվյալ ժամանակահատվածում ստեղծված իրավիճակից և առկա հանգամանքներից ու գործոններից:

Ցավոք, լեգիստական – նորմատիվային իրավահասկացողությունը և դրանից բխող մոտեցումները վերջին երկու հարյուր տարիների ընթացքում գերակա են եղել իրավագիտության և ժողովրդավարական պետությունների քաղաքական ու իրավական պրակտիկայում: Նույնիսկ Խորհրդային Միության Սոցիալիստական Հանրապետությունները, այդ թվում Հայկական ԽՍՀ-ն, հակառակ մարքսիստական ուսմունքի կանոնների, սոցիալիստական հասարակության պայմաններում՝ որպես միակ ճշմարիտ և գործնականում հնարավոր, ճանաչում էին դրական (պոզիտիվ) իրավունքը և դրա նորմատիվային ըմբռնումը: Սակայն, ինչպես տեղին նկատում է տեսաբան Ա. Ս. Շավուրովը, տվյալ մոտեցումների հիման վրա ստեղծված ակտերը «չեն ապահովում իրավական կարգավորման նպատակները: Ընդհակառակը, դրանք ծնում են սոցիալական լարվածություն, սահմանափակում են անհատների ազատությունը և բնական իրավունքները, պաշտոնատար անձանց գործունեության մեջ թույլ են տալիս սպորինություն և կամայականություն» [8, էջ 437]: Այնուհետև, Խորհրդային Միության փլուզման և ազգային օրենսդրությունների ժողովրդավարացման օրինաչափ գործընթացների արդյունքում սկսեցին ներդրվել մի շարք ինստիտուտներ, որոնք ուղղակիորեն հակասում էին լեգիստական – նորմատիվային իրավահասկացողության հիմնական սկզբունքներին: Այսպես օրինակ, Սահմանադրական դատարանի ներդրումը, որն իրավասու է անհամապատասխանության հիմքով անվավեր ճանաչել այն օրենքները, որոնք կհակասեն գործող Սահմանադրության դրույթներին, Մարդու

իրավունքների եվրոպական դատարանի գործողությունը, որն անվավեր է ճանաչում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային չհամապատասխանող պետության կողմից ընդունված ցանկացած նորմատիվ իրավական ակտ: Բացի այդ, Եվրոպական մի շարք պետություններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը, սահմանադրաիրավական մակարդակով իրենց հռչակում են իրավական պետություն, որի առաջատար սկզբունքը իրավունքի փաստացի գերակայությունն է երկրի օրենսդրության նկատմամբ: Միաժամանակ, ընդլայնվում են պետության օրինաստեղծ գործունեությանը քաղաքացիների մասնակցության ձևերը՝ ընդհուպ մինչև հանրաքվեի ժամանակ ընտրողների կողմից օրենքներ ընդունելու իրավունքի ապահովումը և այլն: Այս ամենը բխում է իրավաբանական իրավահասկացողության բովանդակությունից, քանի որ իրավունքը ընկալվում է ոչ թե, որպես կամայական և սուբյեկտիվ իշխանական կամահայտություն այլ օբյեկտիվ, ինքնուրույն, իր բնույթը, էությունը, բովանդակությունն ու յուրահատկությունները (անկախ օրենսդրի կամքից) ունեցող երևույթ: Մա, անշուշտ, ունի առաջադիմական նշանակություն հասարակության և պետության համար, քանի որ տարբերակելով իրավունքը և օրենքը, «Իրավունքը ստեղծում է հասարակությունը, իսկ օրենքը պետությունը» [6, էջ 233], և այս բանաձևի պարագայում իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման գործընթացում, անպայմանորեն հաշվի են առնվում սոցիալական, տնտեսական, քաղաքական, հոգևոր, մշակույթային և մի շարք այլ գործոններ, որոնց միջոցով հնարավոր է դառնում իրավունքի և օրենքի արդյունավետ և ամբողջ ծավալով կենսագործումը:

Վերոգրյալը հաշվի առնելով և ելնելով իրավաբանական իրավահասկացողության դիրքերից՝ այժմ հարկ ենք համարում այս դիրքերից վերլուծել իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը: Այս համատեքստում արժեքավոր է Վ. Ս. Սիրիխի մոտեցումը, ով իրավունքի հնարավորությունից իրականություն վերածումը կապում է անհրաժեշտ որոշակի պայմանների առկայության հետ և, եթե նույնիսկ իրավական հնարավորությունը հասարակության կողմից գիտակված և սոցիալապես օգտակար է՝ հնարավորությունը չի կարող վերածվել իրականության և դառնալ սոցիալական կեցության իրական երևույթ, քանի դեռ վերածման համար անհրաժեշտ բոլոր նախապայմանները չեն ստեղծվել [3, էջ 838]: Վ. Ս. Սիրիխը գտնում է նաև, որ հնարավորությունից իրականություն վերածման պայմանների ձևավորման գործընթացը կարող է ընթանալ տարերայնորեն և, որպես կանոն,

երկար ժամանակ տևել, կամ կարող է ձևավորվել նպատակային և գիտակցված: Մեր համոզմամբ, հասարակությունն ու պետությունն ի վիճակի են էապես արագացնել հնարավորությունից իրականություն վերածման գործընթացը նպատակաուղղված և գիտականորեն հիմնավորված գործունեության իրականացման շնորհիվ, որը կլինի ուղղված սոցիալական կեցության, օրինակ, իրավական, տնտեսական, քաղաքական, սոցիալական կյանքի բարելավմանն և որի արդյունքում կստեղծվեն անհրաժեշտ նախապայմաններ իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման համար: Մինևույն ժամանակ, այդ անհրաժեշտ նախապայմանների ստեղծման գործում որոշիչ և կարևոր դեր է խաղում սոցիալական համակարգի գործառնության և զարգացման ընդհանուր օրինաչափությունների իմացությունը: Այդպիսի օրինաչափությունների մասին համակարգված և ճշմարիտ գիտելիքը արագացնում է իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման գործընթացը, քանի որ ստեղծում է օպտիմալ պայմաններ իրավական հնարավորությունների կենսագործման համար: Այստեղ նաև, չի կարելի մոռանալ այն հանգամանքը, որ, ինչպես արդեն նշել ենք, կոնկրետ պատմական միջավայրը նույնպես ազդում է հնարավորությունից իրականություն վերածման գործընթացի վրա: Այն կարող է ունենալ դրական, բացասական, այնպես էլ «գրոյական» չեզոք ազդեցություն: Դրական ազդեցությունը պայմանավորված է նրանով, որ կոնկրետ պատմական միջավայրում առկա պայմանները գործում են նույն միտումներով և ուղղությամբ, որով տեղի է ունենում հնարավորությունից իրականություն վերածումը և դրանով իսկ արագացնում են այդ գործընթացը: Չեզոք գործող պայմանները ոչ մի կերպ չեն ազդում հնարավորությունից իրականություն վերածման գործընթացի վրա, մինչդեռ բացասական պայմանները հակադարձում են այս գործընթացին, այս կամ այն կերպ դանդաղեցնելով և ընդհուպ մինչև ամբողջովին կանգնեցնելով վերածման գործընթացը:

Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը առավել պատկերավոր բացահայտվում է Վ. Մ. Սիրիխի մատերիալիստական տեսության շրջանակներում: Իրավունքի այս տեսությունը կամ հայեցակարգը, ըստ էության վերախմաստավորվել է Վ. Մ. Սիրիխի կողմից՝ հաշվի առնելով իրավունքի ժամանակակից միտումները: Ուստի, նպատակահարմար ենք գտնում մեր վերլուծության շրջանակներում, ելնելով իրավաբանական իրավահասկացողությունից, դիտարկել իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը, օգտագործելով նաև այս մոտեցման այն մտքերը, որոնք մենք կխոսում ենք:

Այսպես, արձանագրելով, որ դրական (պոզիտիվ) իրավունքին կամ օրենքներին զուգընթաց գոյություն ունեն օրենքներից բարձր, իրենց հատուկ բովանդակությունը և էությունն օբյեկտիվորեն ունեցող իրավունքներ՝ որոնց օրենքներն ու մարդկաց վարքագիծը պետք է համապատասխանեն, այդ իրավունքները անվանենք «օբյեկտիվ իրավունք»:

«Օբյեկտիվ իրավունք» եզրույթը կարելի է հանդիպել 20-րդ դարի որոշ հեղինակների և փիլիսոփաների աշխատություններում, օրինակ, ամերիկացի գրող և փիլիսոփա Այն Ռանդը (1905-1982 թթ.) «օբյեկտիվ» իրավունքի ներքո հասկանում էր մարդկանց վարքագծի ընդհանուր սկզբունքների սահմանում, որոնց նպատակը իրավունքի գերակայության և անձնական իրավունքների ապահովումն է, ինչպես նաև որոշ քաղաքացիների սահամանափակումը, որոնք իրենց գործողություններով ոտնահարում են միմյանց իրավունքները: «Օբյեկտիվ» իրավունքների բացակայության պարագայում, Այն Ռանդի կարծիքով, պետությունը կիրառում է կոդմնակալ օրենքներ, որոնք իշխանական մարմիններին թույլ են տալիս անգեմ, անպաշտպան քաղաքացիներին պարտադրել իրենց կամայական քաղաքականությունը, որոշումները, մեկնաբանությունները, հարկադրանքը, պատիժը և այլն [9]: Այն Ռանդի փիլիսոփայական հայացքներից հետևում է, որ դրական (պոզիտիվ) իրավունքը պետք է բխի «օբյեկտիվ» իրավունքից, բավարարելով հասարակության կարիքները: Այստեղ «օբյեկտիվ» իրավունքները կրում են ընդհանուր բնույթ և դիտարկվում են առանց սահմանելու այն կառուցակարգը, որն ապահովում է այդ ընդհանուր իրավական սկզբունքների վերածումը իրավական իրականության՝ անձանց իրավական նշանակալի գործողությունների տեսքով:

Վ. Մ. Սիրիխի իրավունքի մատերիալիստական տեսության հիմնական առանձնահատկությունն առաջին հերթին «օբյեկտիվ» իրավունքի ճանաչումն է որպես իրավական կարգավորման կառուցակարգի իսկապես գործող բաղադրիչ, որը ձևավորվում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, ինչպես նաև արդի պետությունների գործող սահմանադրություններում ամրագրված ընդհանուր սկզբունքների հիման վրա [4, էջ 16]: Մեր համոզմամբ, «օբյեկտիվ» իրավունքի գործողությունը պայմանավորված է որոշակի կոնկրետ պատմական պայմաններով և ի տարբերություն դրական (պոզիտիվ) իրավունքի, որը գործում է ճիշտ այնքան ժամանակ, որքան ցանկանում է պետության իրավասու, օրենսդիր մարմինը՝ «օբյեկտիվ» իրավունքը շարունակում է գործել, քանի դեռ գործում են տվյալ պահին առկա պատմական պայմանները: Բայց և այնպես,

«օբյեկտիվ» իրավունքը, ինչպես ցանկացած օրինաչափություն կամ իրական իրավական հնարավորություն, վերաձվում է իրավական իրականության միայն այն դեպքում, երբ կենսագործվում է կոնկրետ փաստացի հարաբերություններում: Նման արդյունքի հասնելու համար, Վ. Մ. Սիրիխը գտնում է, որ «օբյեկտիվ» իրավունքները կամ իրավունքի սկզբունքները պետք է անցնեն չորս հաջորդական փուլերով՝ դրական (պոզիտիվ) իրավունքի փուլ, անհատական իրավունքի փուլ, հատուկ (конкретное) իրավունքի փուլ և փաստացի հարաբերությունների փուլ: Առաջին փուլում դրական (պոզիտիվ) իրավունքը վավեր է, միայն այն դեպքում, երբ համապատասխանում է «օբյեկտիվ» իրավունքի համընդհանուր սկզբունքներին [5, էջ 9]: Ընդ որում, դրական (պոզիտիվ) իրավունքը, նախ և առաջ, պետք է սահմանի այն միջոցը, որը գերծ կպահի իրավունքի սուբյեկտին «օբյեկտիվ» իրավունքի պահանջների և սկզբունքների խախտումից: Ըստ այդմ, ստացվում է, որ հասարակական հարաբերությունների և դրանց մասնակիցների վարքագծի իրական կարգավորիչը ոչ թե դրական (պոզիտիվ) իրավունքն է, այլ «օբյեկտիվ» իրավունքի սկզբունքները, որոնք հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգի բոլոր փուլերում հանդիսանում են իրավունքի համար չափանիշ: Ավելին, «օբյեկտիվ» իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման գործընթացը հաճախ տեղի է ունենում պետության կամ օրենսդիր մարմնի կամքին և ցանկություններին հակառակ: Այն պահից սկսած, երբ հասարակության մեջ հասունացել են բոլոր անհրաժեշտ պայմանները նոր իրավահարաբերությունների առաջացման համար՝ այդ վերացական իրավահարաբերությունները վաղ թե ուշ գիտակցվում են իրավունքի սուբյեկտների կողմից և վերաձվում են իրականության փաստացի իրավահարաբերություններում: Գործնականում բոլոր իրավունքներն ու ազատությունները, որոնցով այսօր օժտված են ժամանակակից իրավական պետությունները, քաղաքացիների կողմից նվաճվել են երկար ու դժվարին պայքարի ընթացքում (օրինակ՝ կանանց իրավունքների ճանաչումը և պաշտպանությունը, հավասար ընտրելու և ընտրվելու իրավունքը, մի շարք աշխատանքային իրավունքներ և բազում այլ իրավունքներ):

Իրավական իրականության վերածման կառուցակարգի հաջորդ փուլում ձևավորվում է անհատական իրավունքը, որի ձևավորման համար անձը նախ պետք է ճանաչի հասարակության մեջ գործող «օբյեկտիվ» իրավունքը, այնուհետև դրա հիման վրա ստեղծի իրավական նորմերի համակարգ, որի վերաբերյալ իր գնահատականը կլինի դրական, իսկ վերջում,

ստանձնելով պատրաստականություն կիրառել դրանք փաստացի հարաբերություններում, ունենա կամք կատարելու իրավական նշանակալի գործողություն: Այս համալիր գործունեության արդյունքում ձևավորվում է անհատական իրավունքը: Ընդ որում, անձի կողմից «օբյեկտիվ» իրավունքի սկզբունքները կամ նորմերը ճանաչելը և ընդունելը բավարար չէ: Այս փուլի կարևոր նախապայմանը անձի կամքը և պատրաստականությունն է դեկլարավելու այդ սկզբունքներով կամ նորմերով փաստացի իրավահարաբերություններում: Առանց այս նախապայմանի իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման գործընթացը որևէ կերպ չի կարող իրականանալ:

Ըստ էության, անհատական իրավունքը, Վ. Մ. Սիրիխի մոտ, նույն «օբյեկտիվ» իրավունքն է տեղափոխված առանձին անհատի իրավագիտակցության մակարդակ, որտեղ նա այդ իրավունքը գիտակցում է՝ որպես իր սեփական իրավունքը, որն ինքը կարող է և պետք է իրացնի փաստացի իրավահարաբերություններում [3, էջ 1040]: Եթե դրական (պոզիտիվ) իրավունքի փուլում իրավունքը «օբյեկտիվ» իրավունքի բովանդակությանը համապատասխանող վերացական նորմերի համակարգ էր, ապա անհատական իրավունքի փուլում՝ «օբյեկտիվ» իրավունքը առաջին անգամ ստանում է անհատականացված ձև: Անհատական իրավունքի մակարդակում հատկացվում են «օբյեկտիվ» իրավունքի երկու կարևոր առումներ՝ առաջինը, ապագա իրավահարաբերության սուբյեկտը և երկրորդը, սուբյեկտի իրավական դիրքորոշումն այդ իրավահարաբերության մասնակիցը լինելու պայմանների և եղանակների վերաբերյալ: Այս փուլում նույնպես, իրավահարաբերությունների և դրանց մասնակիցների իրավական դիրքորոշման չափանիշը հանդիսանում է ոչ թե դրական (պոզիտիվ) իրավունքը, այլ «օբյեկտիվ» իրավունքը: Հետևաբար, այն պարագայում, երբ անհատական իրավունքի բովանդակությունը համապատասխանում է «օբյեկտիվ» իրավունքին, սակայն հակասում է դրական (պոզիտիվ) իրավունքի բովանդակությանը, հենց այդ անհատական իրավունքն է հանդիսանում իրավական իրականություն, իսկ դրական (պոզիտիվ) իրավունքը, այս դեպքում, հանդես է գալիս ոչ իրավական կամ չվերաձված իրականության:

Ելնելով իրավունքի էության մեջ ներթափանցման և ճանաչման մակարդակից, ինչպես նաև իրավակարգավորման կառուցակարգի ըմբռնումից՝ ընդունված է տարբերակել անհատական իրավունքների երեք տարատեսակ՝ առօրեական, մասնագիտական և գիտական [4, էջ 18]: Անհատական իրավունքների նմանօրինակ տարբերակումը, և ընդհանրապես անհատական իրավունքները, մեծամասամբ կախված

են անհատի իրավագիտակցության զարգացման մակարդակից: Առօրեական անհատական իրավունքներով օժտված են այն անհատները, որոնք չունեն հատուկ իրավական գիտելիքներ: Տվյալ դեպքում անհատը դրական (պոզիտիվ) իրավունքի նորմերին չի կարող տալ համապատասխան արժեքաբանական գնահատական և շատ դեպքերում պատրաստ է կատարել դրանցից բխող պահանջները կուրորեն: Այլ կերպ է իրավիճակը մասնագիտական անհատական իրավունքների պարագայում, քանի որ այստեղ անհատը, ունենալով հատուկ մասնագիտական կրթություն իրավագիտության ոլորտում և համապատասխանաբար ավելի բարձր իրավագիտակցության մակարդակ, ունակ է իր գիտելիքների հիման վրա տարբերակել իրավական օրենքը իշխանական կամահայտնությունից: Ինչ վերաբերվում է գիտական անհատական իրավունքներին, ապա դրանք հատուկ են իրավաբան գիտնականներին, ովքեր, ունենալով անհատական իրավագիտակցության ամենաբարձր մակարդակը, ոչ միայն իրականացնում են գիտական հետազոտություններ իրավունքի կենսագործման և զարգացման ընդհանուր օրինաչափությունների վեր հանման ուղղությամբ, այլ նաև իրենց հետազոտությունների ընթացքում քննադատում են այն իրավական նորմերը, որոնք անկատար են և ոչ բավարարար դյուրևավետ, այնուհետև ներկայացնում են իրենց առաջարկությունները օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի բարելավման մասին:

Հատկանշական է, որ առաջին նախանշանը, որ գործող նորմատիվ իրավական ակտը կամ օրենքը արդեն իսկ արդիական չէ՝ այդ իրավանորմին հակադրվող անհատական իրավունքն է: Քանի որ, հենց այս փուլում են, շահագրգիռ կողմերը, առաջինը տեսնում իրենց իրավունքների որակական փոփոխությունները և գործող օրենքների թերությունները, որի արդյունքում կարող են ձևավորել նոր «օբյեկտիվ» իրավունք: Բհարկե, «օբյեկտիվ» իրավունքի ստեղծման գործընթացը այդքան էլ պարզունակ չէ և զուտ անհատական իրավական պահանջների հիման վրա «օբյեկտիվ» իրավունքի սկզբունքներ չեն կարող ձևավորվել: Եվ այնուամենայնիվ, «օբյեկտիվ» իրավունքի էությունն ու բովանդակությունը շատ ավելի վաղ և միշտ իրացվում է անհատական իրավունքի մակարդակով, քան, երբ այդ իրավունքը ամրագրվում է դրական (պոզիտիվ) իրավունքի նորմերում:

Անհատական իրավունքների և օրենսդրության ձևավորման արդյունքում առաջանում է «օբյեկտիվ» իրավունքի վերածման երրորդ՝ հատուկ իրավունքի փուլը: Այս փուլում դրական (պոզիտիվ) իրավունքը, հանդիսանալով իրա-

վունքի վերացական նորմերի ձևականացված համակարգ, չի կարող կենսագործվել առանց փաստացի իրավահարաբերությունների մասնակիցների և նրանց անհատական իրավունքների: Որովհետև, առանց սուբյեկտի անհատական իրավունքի գործուն մասնակցության, հնարավոր չէ բացահայտել փաստացի իրավահարաբերության մասնակիցների իրավական պահանջները, ոչ էլ գործող օրենսդրության դիրքերից գնահատել այդ պահանջների օրինաչափությունը: Հետևաբար, հատուկ իրավունքի հիմքում, բացի օրենսդրությունից ընկած է անհատական իրավունքը, առանց որի օրենսդրության պահանջները ձեռք չեն բերի իրավունքի կարգավիճակ, որը համապատասխանում է փաստացի իրավահարաբերության բնույթին:

Վ. Մ. Սիրիխի համոզմամբ անհատների, ինչպես նաև մասնավոր և հանրային իրավունքի այլ սուբյեկտների օրինական վարքագծի իրական շարժառիթը նրանց կարիքներն ու շահերն են [4, էջ 20]: Հետևաբար, փաստացի իրավահարաբերությունների մեջ մտնելիս անհատն ամենից հաճախ առաջնորդվում է իր անձնական նյութական կամ հոգևոր շահերով: Ըստ այդմ, իրավական ազդեցության կառուցակարգում դրական (պոզիտիվ) իրավունքի հաջողությունը կամ ձախողումը և իրավական կարգավորման վերջնական նպատակների իրականացումը՝ ապահովվում է դրական (պոզիտիվ), անհատական և հատուկ իրավունքի փոխհարաբերության դիպլեկտիկայով:

Դրական (պոզիտիվ) և հատուկ իրավունքի օրգանական միավորումը՝ իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգում կամ գործընթացում, իրենից ենթադրում է գործող և վավեր իրավունքի առաջացում: Սակայն, ինչպես գիտենք, ամեն գործող կամ վավեր իրավունքի գոյությունը, դեռևս իրավական իրականություն չէ, ուստի և չի կարող կենսագործվել փաստացի իրավահարաբերություններում: Որպեսզի այդպիսի իրավունքը վերածվի իրավական իրականության և կենսագործվի փաստացի իրավահարաբերություններում՝ անհրաժեշտ է դրական (պոզիտիվ) և հատուկ իրավունքի նորմերի ամբողջությունը համապատասխանի և իր հիմքում կրի «օբյեկտիվ» իրավունքի սկզբունքները: Հակառակ պարագայում, փաստացի իրավահարաբերություններում կենսագործվում են իրավական նորմեր, որոնք արտահայտում են օրենսդիրի սուբյեկտիվ կամայականությունը, որը չունի օբյեկտիվ հիմք և չի կարող ստեղծել իրական իրավունք՝ բացառությամբ ձևական, նորմատիվ մակարդակում: Այսպիսով, «օբյեկտիվ» իրավունքը՝ հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգում, անցնում է երեք հաջորդական փուլերով և լիովին կենսա-

գործվում է չորրորդ՝ փաստացի հարաբերությունների փուլում, որտեղ անհատների իրավաչափ վարքագիծը համապատասխանում է դրական (պոզիտիվ) և հատուկ իրավունքի նորմերում արտացոլված «օբյեկտիվ» իրավունքի սկզբունքներին: Հետևապես, միայն փաստացի հարաբերությունների անմիջական գործողության ներքո է հնարավոր՝ անհատի, «օբյեկտիվ» իրավունքի, հասարակության, պետության և ընդհանրապես իրավական կարգավորման նպատակների իրագործումը կամ իրավունքի հնարավորությունից իրականություն վերածումը:

Իրավահասկացողության մեթոդաբանության տեսանկյունից հատուկ ուշադրության է արժանի նաև իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգի յուրահատուկ արտացոլումը՝ Հեգելի «Իրավունքի փիլիսոփայության» մեջ, որտեղ այս կառուցակարգը Հեգելը բացահայտում է վերացականից (աբստրակտից) դեպի կոնկրետը փիլիսոփայական կատեգորիաների փոխակերպման մեթոդով: Այս մեթոդով վերացական իրավունքի փոխակերպումը կոնկրետի կամ իրական իրավունքի, Հեգելը դիտարկում է, որպես իրականության մեջ իրավունքի կենսագործման գործընթաց, որն իր հերթին բաղկացած է երեք փուլերից՝ վերացական իրավունքի փուլ, բարոյականության փուլ և էթիկայի փուլ:

Վերացական իրավունքի փուլը ներկայանում է ազատ կամքով անհատի իրավունքի տեսքով, առաջին հերթին մասնավոր սեփականության նկատմամբ: Այս ազատությունն արտահայտվում է սեփականատերերի՝ իրենց գույքը տնօրինելու իրավունքով, ներառյալ այն պայմանագրով օտարելու ազատությամբ: Բարոյականության փուլում տեղի է ունենում անհատի ազատ կամքի ինքնորոշում, «*հետևաբար բարոյականության տեսակետն իր ձևով սուբյեկտիվ կամքի իրավունքն է*» [1, էջ 155]: Այս փուլը բնութագրող հիմնական կատեգորիաներ են հանդես գալիս, այնպիսի հասկացությունները, ինչպիսիք են՝ դիտավորություն և մեղք, մտադրություն և բարիք, բարություն և խիղճ: Իրենց հերթին վերացական իրավունքը և բարոյականությունը ձեռք են բերում կոնկրետություն կամ վերածվում են իրականության էթիկայի միջոցով: Էթիկայի փուլում իրավունքի մասին գաղափարը արտահայտվում է արտաքին աշխարհում՝ պետության, քաղաքացիական հասարակության, ընտանիքի տեսքով: Պետությունը, ըստ Հեգելի, առաջնային է, քանի որ վերջինիս մեջ զարգանում են քաղաքացիական հասարակությունը և ընտանիքը, որոնց համար և պետության գաղափարը ստեղծվել է [1, էջ 278]:

Մեր համոզմամբ, վերը նկարագրված կառուցակարգով Հեգելը նախ և առաջ ցույց է տալիս,

որ իրավունքի իրական բնույթը որոշվում է իրավունքի առարկայից դուրս՝ փիլիսոփայության առարկայով, մասնավորապես բարոյագիտության գիտակարգով, երկրորդը, իրավունքի զարգացման տրամաբանությունը՝ Հեգելը կապում է պետության՝ որպես իրավունքի բարձրագույն ձևի ճանաչման անհրաժեշտության հետ: Եվ հենց այս պետության մեջ է իրավունքի մասին գաղափարը և արդեն իսկ կենսագործված կամ իրավական իրականության վերածված իրավունքը ներդաշնակորեն համադրվում: Ըստ էության, Հեգելը, իր այս մոտեցմամբ կարողացել է համատեղել իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման լեգիտական – նորմատիվային և իրավաբանական իրավահասկացողության հիմնական տիպերի մոտեցումները, ինչպես նաև հաղթահարել դրանց հիմնական վարկածների հակասությունը: Մասնավորապես, հաղթահարվել է բնական և դրական իրավունքի տեսության կամ փիլիսոփայության և իրավագիտության հակադրությունը, որտեղ իրավունքի ճանաչման մետաֆիզիկական մեթոդը անգոր է իրավական կատեգորիաների միջոցով բացատրել իրական իրավական երևույթների հակասական դիալեկտիկական կապերը: Մետաֆիզիկական մեթոդի փոխարեն, Հեգելը, իր վերացականից դեպի կոնկրետ մեթոդի միջոցով, առաջարկում է մասնավոր սեփականության իրավունքը ճանաչել որպես ազատ անհատի վերացական իրավունք, որը իրավունքի ստեղծման և կենսագործման հիմնաքարային փուլն է և, որը բարոյականության հետ միասին ստեղծում է իրավունքի այն բովանդակությունը, որը պետության կողմից կենսագործվելով վերածվում է իրավական իրականության:

Ամեննին չթերագնահատելով իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգի բացահայտման գործում Հեգելի վերոգրյալ, ըստ էության, համադրական (ինտեգրալ) մոտեցման արժեքը, այնուհանդերձ պետք է մատնանշենք այն թերությունը, որը, մեր կարծիքով, հանդիսանում է այս մոտեցման հիմնական խնդիրը: Հեգելը, ճանաչելով պետությանը (թեկուզ և իրավական պետությանը)՝ որպես իրավունքի բարձրագույն ձև, ինչպես և լեգիտական – նորմատիվային ըմբռնման պարագայում է, անտեսում է իրավունքի կենսագործման գործընթացը իրական կյանքում և փաստացի իրավահարաբերություններում: Ստացվում է, որ իրավունքի կենսագործումը կամ վերածումը իրավական իրականության զուտ թողնվում է պետության հույսին: Իսկ մեր համոզմամբ, ինչպես արդեն գիտենք, միայն օրենսդիրի կամահայտնությամբ իրավունքը չի կարող վերածվել իրականության և դառնալ համընդհանուր, միայն այն պատճառով, որ

օրենսդիրը այն ճանաչել է այդպիսին: Նույնիսկ այն դեպքում, երբ իրավունքի համընդհանրությունը ապահովվում է պետական հարկադրանքի միջոցով, այն միևնույն է կունենա գործողության սահմանափակ շրջանակ: Մինչդեռ, հասարակությունը ունակ է ինքնուրույն, անկախ պետական մարմիններից, ճանաչել «օբյեկտիվ» իրավունքը և ձևակերպել իր իրավական պահանջմունքները, որոնք կարող են նաև հակասել գործող դրական (պոզիտիվ) իրավունքին: Այս ճանապարհով ձևավորված իրավունքի բովանդակությունն ունի բոլոր հնարավորությունները վերածվել իրավական իրականության և դառնալ համընդհանուր: Մեր այս պնդումը, առավել քան վերաբերվում է առաջադեմ ժամանակակից քաղաքացիական հասարակություններին, որոնց իրավագիտակցությունը բավարարում է ժողովրդավարական պետության կայացման համար:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրված մտտեցումները պետք է արձանագրենք, որ իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգն ունի բարդ, բազմատարր, բազմաստիճան, և փոփոխական բնույթ, որի բացահայտումն անշուշտ կախված է իրավահասկացողությունից: Հետադիմական և դարը ապրած են բոլոր այն մտտեցումները, որոնք հիմնվելով ձևական, լեզվատական – նորմատիվային իրավահասկացողության վրա, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը դիտարկում են միայն նեղ իմաստով, այն հանգեցնելով պաշտոնապես գործող դրական (պոզիտիվ) իրավունքի կամ օրենքի կենսագործմանը հասարակական իրավահարաբերությունների սուբյեկտների վարքագծում՝ դրանց համապարտադիր օգտագործումը, պահպանումը, կատարումը և կիրառումը ապահովելով պետական հարկադրանքով: Այս մտտեցումները իրենց տեղը գիջում են իրավունքի և օրենքի տարբերակման վրա հիմնված հայեցակարգերին, որոնք ելնելով իրավաբանական (նաև խառը) տիպի իրավահասկացողությունից, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը վերլուծում են լայն իմաստով փիլիսոփայական դիրքերից, հաշվի առնելով իրա-

վունքի էությունը, իրավունքի օբյեկտիվ պահանջները, կոնկրետ պատմական միջավայրում առկա պայմանները, ինչպես նաև իրավունքի սուբյեկտների գործուն դերը: Տվյալ իրավահասկացողության կամ իրավունքի և օրենքի տարբերակման մեթոդաբանական դիրքերից իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը ձեռք է բերում նոր բովանդակություն, ինչը մեր կարծիքով բանալի է իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման հիմնախնդրի լուծման համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Гегель Г., Философия права. – М., 1990.
2. Нерсисянц В. С., Философия права. – Москва: издательство НОРМА, 2000.
3. Сырых В. М., Материалистическая теория права: Избранное. – М.: РАП, 2011.
4. Сырых В. М., Омирянвич А. Б., Материалистическая теория права о механизме перевода права из возможности в действительность. // Весник института законодательства и правовой информации РК № 1 (72)-2023, УДК 340.1.
5. Сырых В. М., Проблемы гармонизации позитивного и социального (предпозитивного) частного права. 2017, N 7 (128). LEX RUSSICA <https://lexrussia.msal.ru/jour/article/view/388/389> (Գիտման ամսաթիվը: 24.09.2024).
6. Теория государства и права. Учебник. Под ред. В. М. Корельского и В. Д. Перевалова. М., 1997.
7. Ушанова Н. В., Возможность и действительность в свете правообразовательных процессов. // Правовая политика и правовая жизнь, № 2, Саратов - Москва, 2009.
8. Шавуров А. С., Законность и правопорядок. // В км. Теория государства и права. Под ред. В. М. Корельского и В. Д. Перевалова. – М., Издательство группа ИНФРА. М.-НОРМА, 1997.
9. Smith T., Objective Law. In A Companion to Ayn Rand. 2016 <https://doi.org/10.1002/9781118324950.ch9> (Գիտման ամսաթիվը: 24.09.2024).

Տժանա/Հանձնվել է՝ 09.10.2024

Рецензирована/Գրախոսվել է՝ 14.10.2024

Принята/Ընդունվել է՝ 18.10.2024